

Կ Ա Ր Գ

ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ (ՍԵՅՍՄԱՇՐՋԱՆԱՑՄԱՆ) ԵՎ ՍԵՅՍՄԻԿ  
ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

1. Տարբեր մասշտաբի սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) քարտեզները մշակվում են սեյսմաշրջանացման աշխատանքների իրականացման արդյունքում: Սեյսմաշրջանացման աշխատանքները կատարվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար (ընդհանուր սեյսմաշրջանացում), դրա առանձին մարզերի և մեկից ավելի բնակավայր ընդգրկող համայնքների համար (մանրամասն սեյսմաշրջանացում), բնակավայրերի տարածքների ու հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների համար (սեյսմամիկրոշրջանացում):

2. Քարտեզները, համաձայն «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի, հաստատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը (այսուհետ՝ լիազոր մարմնի ղեկավար): Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշմամբ սահմանված սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) նախագծերը հաստատող լիազոր մարմինն ինժեներատեխնիկական և երկրաֆիզիկական հետազննման նյութերը մինչև շինարարական աշխատանքներն սկսելը ներկայացնում է լիազոր մարմին կամ լիազոր մարմնի սեյսմիկ պաշտպանության ոլորտի տարածքային ստորաբաժանում՝

սեյսմիկ ռիսկի նվազեցման տվյալների բազայի համալրման համար: Սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների շարքը չդասվող օբյեկտներն ընդհանուր նշանակության օբյեկտներ են: Սեյսմիկ պաշտպանության բնագավառում ընդհանուր նշանակության օբյեկտների սեյսմիկ պարամետրերը որոշվում են և սեյսմիկ ռիսկը գնահատվում է օբյեկտների սեփականատերերի հայեցողությամբ:

3. Պատվիրատուն քարտեզը և քարտեզի կազմման համար կատարած աշխատանքների ամփոփագիրը (այսուհետ՝ ամփոփագիր) հանձնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի սեյսմիկ պաշտպանության ծառայության գործակալություն (այսուհետ՝ «ՄՊԾ» գործակալություն)՝ համապատասխան եզրակացությամբ լիազոր մարմնի ղեկավարին հաստատման ներկայացնելու համար: Քարտեզին և դրան կից ներկայացվող ամփոփագրի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները նշված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1352-Ն որոշման N 2 հավելվածում:

4. «ՄՊԾ» գործակալությունն ամփոփագիրը պատվիրատուից ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ իր կողմից ստեղծված փորձագիտական խմբում քննարկում և քարտեզն ամփոփագրի վերաբերյալ եզրակացության հետ միասին հաստատման է ներկայացնում լիազոր մարմնի ղեկավարին կամ կից՝ գրավոր հիմնավորված դիտողություններով վերադարձնում է պատվիրատուին՝ լրամշակման: Քարտեզը վերադարձվում է լրամշակման, եթե ամփոփագիրը չի բավարարում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1352-Ն որոշման N 2 հավելվածի պահանջները: Քարտեզների հաստատման ժամանակ ծագող վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պատվիրատուն համապատասխան լրանշակումից հետո ամփոփագիրը կրկին հանձնում է «ՍՊԾ» գործակալություն՝ եզրակացություն ստանալու համար:

6. «ՍՊԾ» գործակալությունը լրանշակված ամփոփագիրն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է քարտեզը և իր եզրակացության հետ միասին ներկայացնում լիազոր մարմնի ղեկավարին:

7. Լիազոր մարմնի ղեկավարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է քարտեզը և հանձնում պատվիրատուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ (ՍԵՅՍՄԱՇՐՋԱՆԱՑՄԱՆ) ԵՎ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏԵՋՆԵՐԻՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՄՓՈՓԱԳՐԻ  
ԿԱԶՄԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մարզերի ու բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ կիրառվող սեյսմիկ գոտևորման (սեյսմաշրջանացման) և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները կազմվում են այդ փաստաթղթերում կիրառվող քարտեզների մասշտաբին ներկայացվող պահանջին համապատասխան մասշտաբով:

2. Սեյսմիկ գոտևորման (սեյսմաշրջանացման) քարտեզները, կախված քարտեզի մասշտաբից, լինում են ընդհանուր սեյսմաշրջանացման քարտեզներ, մանրամասն սեյսմաշրջանացման քարտեզներ և սեյսմամիկրոշրջանացման քարտեզներ:

3. Պետական միջոցների հաշվին սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքներ կարող են իրականացնել՝

1) սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ երկրաֆիզիկական սարքավորումների և ընդերքի ուսումնասիրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների (հորատանցման) տիրապետող կազմակերպությունները.

2) երկրաբանության ոլորտում առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող, երկրաբանություն կամ երկրաֆիզիկա կամ օգտակար հանածոների որոնման և հետախուզման երկրաֆիզիկական եղանակներ կամ սեյսմոլոգիա մասնագիտություն-

ներից մեկով առնվազն մեկ գիտական աշխատող ունեցող կազմակերպությունները, կամ այդ աշխատանքները լիազոր մարմին են ներկայացվում երկրաբանություն կամ երկրաֆիզիկա կամ օգտակար հանածոների որոնման և հետախուզման երկրաֆիզիկական եղանակներ կամ սեյսմոլոգիա մասնագիտություններով առնվազն մեկ գիտական աշխատողի եզրակացությամբ:

4. Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) քարտեզների մշակման համար իրականացվող սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքներում անհրաժեշտ երկրաֆիզիկական սարքավորումների և տեխնիկական միջոցների ցանկը, սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ տեխնիկական միջոցներով և երկրաֆիզիկական սարքավորումներով հագեցվածության աստիճանի չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը:

5. Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների մշակման տեխնիկական առաջադրանքի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը:

6. Սեյսմիկ գոտևորման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներին կից ներկայացվող ամփափագիրը բովանդակում է հետևյալ բաժինները՝ տեքստային մաս և տեքստային հավելվածներ, գրաֆիկական մաս և քարտեզի բացատրագիր:

7. Սեյսմիկ գոտևորման քարտեզները կազմվում են՝ առանձնացնելով տարբեր սեյսմիկ վտանգ ունեցող գոտիներ՝ արտահայտված գրունտների առավելագույն հորիզոնական արագացումների արժեքներով, ծանրության ուժի արագացման (g) մասերով:

8. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները կազմվում են՝ առանձնացնելով սեյսմիկ ռիսկի բարձր, միջին, ցածր մակարդակներ ունեցող գոտիներ:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՅՄՄԱՇՐՁԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

9. Ընդհանուր սեյսմաշրջանացման (այսուհետ՝ ԸՍՇ) քարտեզները կազմվում են երկրաֆիզիկական, երկրաբանական, երկրաձևաբանական, սեյսմաբանական տվյալների կիրառմամբ, ինչպես նաև արբանյակային և աերոտիեզերական լուսանկարների համալիր վերծանմամբ, աերոտիեզերական հեռահար զոնդավորման տվյալների մեկնաբանմամբ, ֆիզիկաերկրաբանական, երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքներով: ԸՍՇ-ի քարտեզները վերանայվում են յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ կամ տարածաշրջանում ուժեղ երկրաշարժից հետո:

10. ԸՍՇ-ի քարտեզը կազմվում է 0.1 g ճշտությամբ:

11. ԸՍՇ-ի հավանականային քարտեզը կազմվում է Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքների համար՝ 1:500000 մասշտաբի:

12. ԸՍՇ-ի քարտեզներին կից ներկայացվող ամփոփագիրը ներառում է տեքստային մասը, տեքստային հավելվածը, գրաֆիկական մասը և քարտեզի բացատրագիրը:

## III. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՍԵՅՄՄԱՇՐՁԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

13. Մանրամասն սեյսմաշրջանացման (այսուհետ՝ ՄՍՇ) քարտեզները կազմվում են երկրաֆիզիկական, երկրաբանական, երկրաձևաբանական, սեյսմաբանական, ինժեներասեյսմոլոգիական, ինժեներաերկրաբանական տվյալների կիրառմամբ, ինչպես նաև արբանյակային և աերոտիեզերական լուսանկարների համալիր վերծանմամբ, աերոտիեզերական հեռահար զոնդավորման տվյալների մեկնաբանմամբ, ֆիզիկաերկրաբանական, երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքներով:

14. ՄՍՇ-ի քարտեզները վերանայվում են յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ կամ՝ տարածաշրջանում ուժեղ երկրաշարժից հետո:

15. ՄՄՇ-ի հավանականային քարտեզը կազմվում է Հայաստանի Հանրապետության տարածքի համար՝ 1:100000 մասշտաբի:

16. ՄՄՇ-ի քարտեզը կազմվում է 0.05 g ճշտությամբ:

17. ՄՄՇ-ի քարտեզներին կից ներկայացվող ամփոփագիրը ներառում է տեքստային մասը, տեքստային հավելվածը, գրաֆիկական մասը և քարտեզի բացատրագիրը:

#### IV. ՍԵՅՍՄԱՄԻԿՐՈՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Սեյսամիկոշրջանացման (այսուհետ՝ ՄՄՇ) քարտեզները կազմվում են դաշտային երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքներով՝ օգտագործելով երկրաֆիզիկական, երկրաբանական, երկրաձևաբանական, սեյսմաբանական և ինժեներատեղեկաբանական շրջանացման տվյալները:

19. ՄՄՇ-ի քարտեզները վերանայվում են յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ կամ՝ տարածաշրջանում ուժեղ երկրաշարժից հետո:

20. ՄՄՇ-ի քարտեզը կազմվում է 0.05 g ճշտությամբ:

21. ՄՄՇ-ի քարտեզներին կից ներկայացվող ամփոփագիրը ներառում է տեքստային մասը, տեքստային հավելվածը, գրաֆիկական մասը և քարտեզի բացատրագիրը:

#### V. ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները կազմվում են՝ հաշվի առնելով տվյալ տեղանքում հարուցված երկրորդային ռիսկերի առկայությունը, օգտագործելով սեյսմիկ գոտևորման, ինժեներատեղեկաբանական, գեոմորֆոլոգիական, դեմոգրաֆիկական և ենթակառուցվածքի մասին տեղեկատվությունը, օբյեկտների խոցելիության մակարդակի գնահատումները:

23. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները վերանայվում են յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ կամ՝ տարածաշրջանում ուժեղ երկրաշարժից հետո:

24. Սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը:

25. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներին կից ներկայացվող ամփոփագիրը ներառում է տեքստային մասը, տեքստային հավելվածը, գրաֆիկական մասը և քարտեզի բացատրագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ